ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կատարող՝ Հրանուշ Մնացականյան

ՎԶՄ Արտավանի միջնակարգ դպրոց

Խմբի պատասխանատու՝ Ա.Գևորգյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 3

ԳԼՈՒԽ1 ` Արտադասարանական աշխատանքներ կենսաբանությունից _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 4

Գլուխ 2 ` Էկոլոգիական մշակույթի ձյավորումը արտադասարանական աշխատանքներում _ _ _ 12

Եզրակացություն _ 26

Գրականություն _ 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների կենսաբանական հետաքրքրությունների զարգացման գործում զգալի տեղ է տրվում արտադասարանական գործողություններին: Այս աշխատանքը հիմնված է աշակերտների ձեռք բերած գիտելիքների, հետաքրքրությունների և հակումների վրա : Կենսաբանական արտադասարանական աշխատանքները անսահմանափակ հնարավորություններ են ստեղծում զարգացնելու դպրոցականների առարկայական գիտելիքները և կատարելագործելու նրանց ստեղծագործական գործունեությունը, խթանելու հետաքրքրությունների շրջանակը: Հետաքրքրությունների զարգացումը բարդ գործընթաց է և ներառում է մտավոր հուզական և կամավոր տարրեր՝ որոշակի համադրությամբ:

Սովորողների շահերը, հետաքրքրությունները տարբեր են, ուսուցչի խնդիրն է վաղ մանկությունից սերմանել ուշադիր վերաբերմունք բնության նկատմամբ: Այն չպետք է սահմանափակվի ուսումնական աշխատանքով : Դասապրոցեսում ձեռք բերած գիտելիքները խորացնելու համար անհրաժեշտ է անցկացնել արտադասարանական աշխատանքներ:

Ուսուցչի խնդիրն է ընդլայնել երեխաների հետաքրքրությունների շրջանակը, կրթել բնություն սիրող , հարուստ գիտելիքներ ունեցող սերունդ: Նա կոչված է զարգացնելու դասի և արտադասարանական աշխատանքների միջև կապը, նպաստելու սովորողների ճանաչողական, հաղորդակցային , էթիկական , սիրողական որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Արտադասարանական աշխատանքների նպատակն է նաև էկոլոգիական մշակույթի ձևավորումը:

ԳԼՈՒԽ 1

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ենթագլուխ 1՝Արտադասարանական աշխատանքների նպատակն ու խնդիրները

Անհատի համակողմանի զարգացման և ձևավորման գործում մեծ նշանակություն ունեն դպրոցական կենսաբանական առարկաները: Կենսաբանության դասերը, լաբորատոր պարապմունքները, գործնական աշխատանքները թույլ են տալիս սովորողներին զինել կենդանի բնության վերաբերյալ խոր և կայուն գիտելիքներով, ձևավորել սեր կենդանիների և բույսերի հանդեպ: Կենսաբանության դասավանդման ընթացքում դպրոցականների մեջ դաստիարակվում են հայրենասիրական զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, զարգանում է սեր աշխատանքի նկատմամբ : Կենսաբանական գիտելիքների ձևավորումը թերի կլիներ առանց կենսաբանական արտադասարանական աշխատանքների կատարման:

Աշակերտների համար արտադասարանական միջոցառումները ցանկալի են և սպասված: Ժամանակակից դպրոցում երբեմն գերագնահատվում է ուսումնական գործընթացը՝ հետին պլան մղելով արտադասարանական միջոցառումներին: Սակայն սխալ կլինի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքով, չէ որ դպրոցականների հարցասիրությունը, հետաքրքրությունը իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Արտադասարանական աշխատանքների բազմապիսի ձևերի կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը և ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը: Արտադասարանական աշխատանքն այդ առումով շատ առավելություններ ունի դասի համեմատությամբ : Նրա բովանդակությունը խիստ կանոնակարգված չլինելով , թույլ է տալիս ավելի օպերատիվ կերպով օգտագործել սովորողների զարգացման համար

գիտության, տեխնիկայի , մշակույթի և արվեստի նորագույն նվաճումները: Պայմաններ է ստեղծվում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական և այլնի կազմակերպման համար , որի շնորհիվ կարող են զարգանալ երեխաների հակումներն ու ընդունակությունները, հմտություններն ու կարողությունները:

Արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից հնարավորություն են տալիս խորացնելու կապը տեսության և գործնականի

միջև: Դպրոցականները հաղորդակից են դառնում իրենց ուժերին համապատասխան գործառույթների: Արտադասարանական աշխատանքների հաջողությունը կապված է նրա բովանդակության և կազմակերպման հետ: Այն պետք է հետաքրքրություն առաջացնի դպրոցականների մեջ և գրավի նրանց: Աշակերտի համար այն չպետք է վերածվի պարզապես լրացուցիչ պարապմունքի, ոչ էլ հանգստի ձևի: Այն պետք է նպատակային նշանակությամբ կազմակերպել, հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, տրված հնարավորությունները: <<Երեխան պահանջում է անդադար գործունեություն և հոգնում է ոչ թե գործունեությունից, այլ նրա միօրինակությունից և միակողմանիությունից>>,- գրել է Կ. Դ. ՈՒշինսկին:

Արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից նպատակ ունեն դպրոցականների ՝ ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքների կիրառման և հմտությունների ու կարողությունների կատարելագործման իրականացմանը: Նրա խնդիրն է մատաղ սերնդին հնարավորություն ընձեռնել ճանաչել, սիրել ու պահպանել բնությունը: Արժևորել ու խնայողաբար օգտագործել բնական պաշարները, ուղիներ որոնել շրջակա միջավայրի պահպանության համար: Այս գործընթացը հնարավորություն է տալիս սովորողներին տալ էկոլոգիական կրթություն և դաստիարակություն, այն այսօրվա շրջանավարտի կարևորագույն հատկանիշն է:

Արտադասարանական աշխատանքները ուսումնադաստիարակչական մեծ նշանակություն ունեն, քանզի դպրոցականների առարկայական գիտելիքները առավել ցանկալի արդյունավետ են դառնում և սահմանափակված չեն , այլ ձևավորում են կարողություններ կենսաբանական գիտության հիմնական մեթոդները՝ զննումն ու փորձը ինքնուրույն կիրառելու և հստակ եզրահանգումներ կատարելու:

Ենթագլուխ 2՝ Արտադասարանական աշխատանքների իրականացման ձեւերը

Արտադասարանական աշխատանքները կատարվում են բնագիտությունից, կենդանաբանությունից, բուսաբանությունից , մարդու անատոմիայից, ընդհանուր կենսաբանությունից: Ուշադրություն պետք է սևեռել բույսերի կազմության, բազմազանության , նշանակության, սեզոնային երևույթների

ուսումնասիրման վրա: Ցանկալի է, որ յուրաքանչյուր բանասեր քաջատեղյակ լինի կենդանիների առանձնահատկություններին, նրանց պահպանմանը, խնամքին: Արտադասարանական աշխատանքները մարդու անատոմիայից , ֆիզիոլոգիայից և հիգիենայից հիմնականում կատարվում է ինքնադիտման և փորձի շնորհիվ, ուշադրության կենտրոնում պահելով մարդու առողջությունը և առողջ ապրելակերպի իմացությունը: Ինչ վերաբերվում է ընդհանուր կենսաբանությանը, ապա օգտակար է ուշադրության արժանացնել ժառանգականության և փոփոխականության , բուսական և կենդանական աշխարհում գոյության պայքարի, կենդանի օրգանիզմի՝ նրան շրջապատող միջավայրի պայմանների հետ փոխադարձ կապերի հարցերին : Անհրաժեշտ է, որ երեխաները ծանոթանան սելեկցիայի աշխատանքներին, նախապատվությունը տալով գործունեության այն տեսակներին, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու տեսության կապը գործնականի հետ:

Աշխատանքը կենսաբանությունից մատչելի պետք է լինի երեխաների տարիքային առանձնահատկություններին: Ծրագրային նյութը խորացնելու նպատակով արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից կազմակերպվում է հետևողականորեն, նպատակաուղղված, որոշակի համակարգով: Սկզբնական շրջանում մշակվում է աշխատանքային պլան, որում, ելնելով թեմայի առանձնահատկություններից ու անհրաժեշտությունից , տեղ է հատկացվում ինքնուրույնության և ինքնակրթության որակներին:: Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել իրականությունը , այլև որոշակի նորություն մտցնեն իրականության մասին ըմբռնումների , հասկացությունների մեջ:

Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ , հոգևոր ուժերի լարում , ստացած գիտելիքների՝ կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն և կյանքի դժվարություններին դիմակայելու մեծ կամք:

Արտադասարանական աշխատանքների կազմակերպման տարածված ձևը առարկայական խմբակներն են, որոնք նպաստում են սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, գիտության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը: Խմբակներում սովորողները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր դնելու , դիտումները կատարելու հմտություններ:

Կենսաբանական դասերի կազմակերպման կարևոր բաղադրիչներից մեկն էլ էքսկուրսիաներ անցկացնելու մեթոդիկան է, որն օգնում է աշակերտների կողմից բնության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը: Այն նպաստում է սովորողների մոտ զարգացնելու համագործակցային որակներ, կարգապահություն, նախաձեռնություն, ձևավորելու նոր հմտություններ և կարողություններ: Սովորողները կարող են կատարել ֆենոլոգիական դիտումներ, հավաքել ցուցադրական նյութեր, իրականացնել հետազոտություններ, այցելել արգելոց, հանգստի գոտի, թանգարան: Էքսկուրսիան պետք է ունենա նպատակ և խնդիրներ, լինի ծրագրավորված երթուղի , ունենա թույլտվություն: Ավարտից հետո անհրաժեշտ է անցկացնել անդրադարձ `նախապես առանձնացված հարցերի շուրջ, որոնք կբացահայտեն սաների յուրացրած նյութի ընկալման աստիճանը, ձեռքբերումների շրջանակներն ու ծավալները, հետաքրքրությունների սահմանները: Յուրաքանչյուր էքսկուրսիայի անցկացումից հետո անհրաժեշտ է վերլուծել կատարված էքսկուրսիան՝ նշելով թերի և դրական կողմերը:

Կրթական աշխատանքների կազմակերպման արտադասարանական միջոցառումներից է բանավեճերի, քննարկումների, զրույցների , դասախոսությունների և վիկտորինաների անցկացումը: Նշված միջոցառումները համակարգվում են ուսուցչի կողմից և նպաստում են դպրոցականների հարցասիրության, բանավիճելու , սեփական կարծիքը արտահայտելու , ինքնուրույնության ձևավորմանը և զարգացմանը: Կարևոր միջոցառումներից են նաև աշակերտների նախաձեռնությամբ հանդեսների, ցերեկույթներ, տարաբնույթ

խաղերի և մրցույթների կազմակերպումն ու իրականացումը: Նման միջոցառումների անցկացումը նպաստում է համագործակցության զարգացման, կազմակերպչական աշխատանքների կատարման հմտությունների ձևավորմանը: Արդի գիտությունների զարգացման պայմաններում կարևորագույն ուղղություններից մեկն էլ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ աշխատանքների կազմակերպումն է: Աշակերտների համար արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից հետաքրքրությունների շրջանակը մեծացնելուն նպաստում են դպրոցականների կողմից ՏՀՏ-ների կիրառումը , ինչը ճանապարհ է հարթում դեպի համացանցի խելահեղ տեղեկատվական աշխարհ:

Արտադասարանական գործունեության կազմակերպման բազմապիսի ձևերի և մեթոդների ընտրության հարցում մեծ է ուսուցչի և սովորողների փոխըմբռնման, փոխադարձ համաձայնությամբ տարվող աշխատանքները: Արտադասարանական աշխատանքների կազմակերպման տարածված ձևերն են՝

1. անհատական ՝ կենսաբանական գրականություն կարդալը, զեկույցներ, վերլուծություններ, հոդվածներ, ռեֆերատներ պատրաստելը, ՏՀՏ աշխատանքներ կատարելու հմտությունները:

2. խմբային ՝անցկացվող դասընթացները, պատի թերթերի ձևավորումը , փորձերի իրականացումը, էքսկուրսիաների կազմակերպումը, ֆիլմերի դիտումներ ու քննարկումները:

3. զանգվածային ՝ էքսկուրսիաների կազմակերպումը, մրցույթների, վիկտորինաների, օլիմպիադաների անցկացումը և այլն:

Ենթագլուխ 3՝ Արտադասարանական աշխատանքների առանձնահատկությունները

Արտադասարանական աշխատանքների կազմակերպման ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված առանձնահատկությունները կարելի է խմբավորել այսպես՝

1) Արտադասարանական աշխատանքները սովորողների գործունեության համադրություն է, որի կազմակերպումը կրթական ազդեցության հետ միասին կազմում են աշակերտների անձնական որակները:

2) Արտադասարանական աշխատանքները մեծ ու փոքր հարցերի համադրություն է, որի արդյունքները ժամանակի ընթացքում հեռավոր են, ոչ միշտ են տրվում ուսուցչի կողմից:

3) Կատարվող աշխատանքներում բացակայում է խիստ կանոնակարգը: Ուսուցիչը արտադասարանական աշխատանքների կազմակերպման ձեերն ու մեթոդները ընտրելու լայն հնարավորություններ ունի , քան դաս անցկացնելիս : Սա հնարավորություն է տալիս գործել սեփական հայացքներին ու համոզմունքներին համապատասխան և մեծացնում է ուսուցչի պատասխանատվությունը ընտրության հարցում:

4) Արտադասարանական աշխատանքների արդյունքների նկատմամբ վերահսկողության բացակայությունն է: Որպես կանոն գնահատվում են ընդհանուր արդյունքները:

5) Աշխատանքները իրականացվում են ընդմիջումներին, դասերից հետո, արձակուրդներին, հանգստյան օրերին:

6) Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը լայն հնարավորություններ ունի ներգրավելու ծնողներին, օգտագործելու նրանց և այլ մեծահասակների փորձը , խորհրդակցելու մասնագետների հետ:

7) Արտադասարանական աշխատանքները պլանավորվում են : Դրանք բխում են դպրոցականների առարկայական ծրագրերի և չափորոշչային պահանջների կատարմանը համապատասխան: Այստեղ կարևորվում են նաև աշակերտների հետաքրքրությունների սահմանները:

8) Աշակերտը դառնում է կատարվող աշխատանքների և կազմակերպիչ, և մասնակից, և կատարող , և վերահսկող:

9) Կենսաբանական արտադասարանական աշխատանքները նպաստում են դպրոցականների անհատական կարողությունների բացահայտմանը , որը հնարավոր չէ դիտարկել դասարանում: Ներգրավվածությունը հարստացնում է երեխաների անձնական փորձը, գիտելիքները, ձևավորում է գործնական հմտություններ և կարողություններ :

10) Երեխան սովորում է ապրել և աշխատել թիմում, միհամագործակցել մյուս անդամների հետ, հոգ տանել ընկերներին:

11) Արտադասարանական գործունեության յուրաքանչյուր տեսակ ՝ սպորտային, խաղային, ճանաչողական, հաղորդակցային, ստեղծագործական, հարստացնում է դպրոցականների կոլեկտիվ փոխգործակցությունը: Նրանց մեջ դաստիարակվում են ընկերասիրություն, հանդուրժողականության, սեր ու հարգանք:

12) Կենսաբանական արտադասարանական աշխատանքները նպաստում են սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության ձեւավորմանը:

ԳԼՈՒԽ 2՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Ենթագլուխ 1 ՝ Ինչ է էկոլոգիական մշակույթը

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը մատաղ

սերնդի մոտ դպրոցի կարեւոր խնդիրներից մեկն է , որը ձեւավորվում է բարոյական մշակույթ և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա : Այն խթան է հանդիսանում էկոլոգիական կրթության զարգացման համար:

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում , որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականացվում է դպրոցում : Բացի հիմնական հասկացություններից և արժեքներից , ներկայիս մոդելը արժեքավորում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր , գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ: Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի պահպանության գործում, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության ձևավորումն է: Ակտիվ ուսումնառության արդյունքում կարելի է դաստիարակել

էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ, ով սրտացավ ու հոգատար վերաբերմունք կունենա շրջապատի հանդեպ:

Նպատակը բնապահպանական կրթությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

1. կրթական

• գտնել համակարգի բնապահպանական խնդիրները և առաջադրել արդի լուծման ուղիներ,

• ձևավորել էկոլոգիապես ձայնային վարքի և գործունեությամբ , առողջ ապրելակերպով անհատ:

2.զարգացող

• զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում , ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պահպանության զարգացման համար:

• խելացի(կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունք բնության նկատմամբ՝որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու վճռականությունը, պատասխանատվությունը):

Բնապահպանական դաստիարակությունը առաջնային է , քանի որ մենք ապրում ենք ապագա սերունդների առողջության պահուստի հաշվին : Էկոլոգիական կրթության նպատակն է մարդուն զինել բնական միջավայրի և բնական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտ գիտելիքներով: Էկոլոգիայի ուսումնակրթական ծրագրում ընդգրկված հարցերից են հասարակության և բնության միասնականության ըմբռնումը, շրջակա միջավայրի բնօգտագործման ու բնապահպանության խնդիրները:

<< Բնությունը կատակներ չի ընդունում , նա միշտ ճշմարտացի է , մշտապես լուրջ, մշտապես խիստ . նա միշտ արդարացի է , իսկ սխալմունքներն ու մոլորությունները բխում են մարդկանցից: >> Սրանք Յոհան Վոլֆգանգ Գյոթեի հանճարեղ մտքերն են:

Մարդու և բնության փոխազդեցությունը հանգեցրել է համաշխարհային նշանակություն ունեցող էկոլոգիական մի շարք խնդիրների ՝ էկոլոգիական ճգնաժամի, բնության և մշակույթի ոչնչացման: Բնության պահպանությունը դարձել է քաղաքական, տնտեսական, սոցիալական , մանկավարժական, հոգեբանական խնդրի: Այդ իսկ պատճառով բնության նկատմամբ վերաբերմունքի նոր ձևը՝ բնության հետ ներդաշնակությունը, դարձել է կրթության և դաստիարակության խնդիրներից մեկը: Էկոլոգիական պայմանները, շրջապատող իրականության գործոնները մեծ ազդեցություն ունեն մարդու հոգեկան առողջության վրա: Էկոլոգիական աղտոտվածությունը , բնակլիմայական պայմանների փոփոխությունները հանգեցնում են սթրեսային գործոնների թվի ավելացմանը:

Շրջապատող իրականությունը մեծ նշանակություն ունի հոգեկանի ձևավորման և զարգացման գործում: Այս ամենն ամփոփվում է էկոլոգիական գիտակցության դաշտում, որը բնության մասին պատկերացումների , վերաբերմունքային և վարքային մոդելների համամասնությունն է:

Բնության հանդեպ վերաբերմունքը ունի զարգացման տարիքային որոշակի դինամիկա: Յուրաքանչյուր տարիքային խմբերի բնորոշ է էկոլոգիական գիտակցության զարգացման ուրույն առանձնահատկություններ:

Ենթագլուխ 2՝ Էկոլոգիական դաստիարակության ձյավորումը կենսաբանական արտադասարանական աշխատանքներում

Շրջակա միջավայրի պահպանության և բարելավման հիմնախնդիրը համամոլորակային բնույթ ունի: Շրջակա միջավայրն ու պայմանները մեծ դեր են խաղում անձի ձևավորման և զարգացման գործում: Յուրաքանչյուր տարիքային փուլի բնորոշ է էկոլոգիական գիտակցության զարգացման ուրույն առանձնահատկություններ: Թե' ազգային և թե' համամոլորակային շրջանակներում անհրաժեշտ է հասարակական նոր մտածելակերպի ձևավորում ՝ որպես ամենահրատապ խնդիր: Էկոլոգիական հիմնահարցերի լուծման գործում այսօր մեծ դեր է վերապահվում Էկոլոգիական դաստիարակության քարոզչությանը կենսաբանական արտադասարանական աշխատանքների կազմակերպման ժամանակ: Նման աշխատանքները կատարվում են մեծամասամբ բնական միջավայրում և առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում դպրոցականների բնագիտական գիտելիքների հարստացման գործում: Շփվելով բնության հետ , սովորողներն ավելի մեծ հնարավորություններ են ունենում ճանաչելու և սիրելու կենդանական ու բուսական աշխարհները:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցում<<Մարդը և աշխարհը >> գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ , հստակեցվում է զգալի թվով մատչելի օրինակներով: Սկսած <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդումից կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ , ով պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ թե' դրական , թե' բացասական իմաստով:

Կենսաբանական արտադասարանական պարապմունքների և միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա երեխաներին ստանալու գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին , հստակեցնելու ժամանակակից բնապահպանական հիմնախնդիրները: Նրանք կբացահայտեն հակասությունները հասարակության և բնության միջև, կծանոթանան իրական բնապահպանական խնդիրներին :

Այցելություններն ու էքսկուրսիաները ակնառու կդարձնեն բնապահպանական հիմնախնդիրները և էկոլոգիական աղետները: Սա կստիպի սովորողներին անտարբեր չմնալ , ահազանգել և ինքնատիպ լուծումներ գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Բնապահպանական ուղղվածություն ունեցող ոչ ավանդական դասաժամերը `<<Անտառի օր>>, <<Ծաղկի տոն>> ,<<Պահպանենք բնությունը>> <<Մեր թևավոր բարեկամները>> և այլ միջոցառումները սովորողների մոտ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում բնության նկատմամբ: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Սովորողներն անկախ իրենց կամքից ձեռք են բերում որոշակի մեթոդներ , նոր գաղափարներ, լուծումներ , գտնում են բացահայտումներ, զարգացնում են բանավիճելու սեփական փորձը , որոնք նպաստում են սովորողների անհատական հարաբերությունների ձևավորմանը , նրանց խնդիրների, տեղական ծանոթ միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու , գտնելու հնարավորությանը: Դասի արդյունավետությանը բարձրանում է համակարգչային գիտելիքների շնորհիվ:

Ենթագլուխ 3՝ Ուսուցչի դերը կենսաբանական արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործում

Հանրակրթական դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում անփոխարինելի դերակատարում ունի ուսուցիչը, ում վստահել են մատաղ սերնդի կրթության և դաստիարակության դժվարին և խիստ պատասխանատու աշխատանքը: Ուսուցիչն այն անձն է, ով սրտացավ ու հոգատար վերաբերմունք ունի իր սաների հանդեպ , ով անմնացորդ նվիրումով ծառայում է դպրոցականների՝ առարկայական գիտելիքներ ձեռք բերելու, հմտություններ և կարողություններ զարգացնելու գործընթացին: Նա պատասխանատու է հասարակության ապագա անդամների բարոյահոգեբանական, հայրենասիրական, էկոլոգիական դաստիարակության ճիշտ կազմակերպման համար:

Արտադասարանական աշխատանքների փորձը կենսաբանությունից, որ կուտակել է հանրակրթական դպրոցը , ցույց է տալիս , որ նրա հիմքում պետք է ընկած լինի ուսուցչի ղեկավարությամբ անցկացվող աշակերտների ինքնուրույն, գերազանցապես գործնական բնույթի գործունեությունը՝ ինքնուրույն փորձերը, դիտումները, ֆիզիկական աշխատանքը, տեղեկատուների, բույսերի որոշիչների , ամսագրերի, գիտահանրամատչելի գրականություն վրա կատարվող աշխատանքը: Ուսուցիչը արտադասարանական աշխատանքների կազմակերպիչն է ու ղեկավարը, ուղղորդողն ու համակարգողը: Անգնահատելի դեր ունի ուսուցիչը կենսաբանական արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործում: Նա ապահովում է երեխաների սերտ բնության հետ, կարևորելով նրանց կրթական համակարգի գիտելիքները , խորացնելու շրջակա միջավայրի պահպանության շրջանակները: Նա չպետք է սահմանափակվի դպրոցականների հարցասիրությամբ, փորձառու ուսուցիչները բացահայտում են նոր ուղիներ , խթանում նոր աշխատանքների մտահղացմանը , բարդացնում և ընդարձակում կատարված աշխատանքները: Ուսուցչի ջանքերով արտադասարանական աշխատանքների իրականացումը ընդլայնվում է դպրոցի և համայնքի մակարդակով: Կազմակերպվում են մասսայական միջոցառումներ, տոներ,

երեկոներ, զվարճալի կենսաբանության ժամեր, բնապահպանական միջոցառումներ:

Կենսաբանական արտադասարանական աշխատանքների արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել և ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների խորությունը , նպատակասլաց ձևով զարգացնել դրանք: Ազգային դպրոցի վերակառուցման շրջանում ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու տարածումը մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից է: Հետազոտող ուսուցիչը հնարավորություն է ստանում բացահայտելու ուսուցչի գործողությունների և դրանց արդյունքների միջև եղած օբյեկտիվ կապերը, պարզելու այն պայմանները, որոնց առկայությամբ դպրոցում դաստիարակության և ուսուցման այս կամ այն մեթոդները, հնարները տալիս են դրական արդյունքներ: Որքան ճկուն է ուսուցչի միտքն ու հնարամտությունը, նույնքան բեղմնավոր է նրա գործունեությունը: Իր սաների հանդեպ ճիշտ , անկողմնակալ վերաբերմունքը ուսումնական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում կարող է հրաշալի արդյունքներ ունենալ:

Ուսուցիչը ամենալավն է ճանաչում իր սաներին , գիտի նրանց հնարավորություններն ու ներուժը, ծանոթ է նրանց ստեղծագործական մոտեցումներին , ձեռքբերումներին հետաքրքրությունների շրջանակին , անհատական ու տարիքային առանձնահատկություններին: Նա բոլորից լավ կարող է ընդլայնել երեխաների հետաքրքրությունների սահմանը, պահպանելով և զարգացնելով դասապրոցեսի և արտադասարանական աշխատանքների միջև կապը: Ուսուցչի խնդիրն է նաև կատարելագործել աշակերտների ճանաչողական, հաղորդակցային, ստեղծագործական, փորձարարական հմտությունների ու կարողությունների զարգացումները:

Ուսուցչի օգնությամբ դպրոցականները ծանոթանում են իրենց շրջապատում հանդիպող բույսերին ու կենդանիներին , կատարում են ֆենոլոգիական դիտումներ, բնապահպանական աշխատանքներ

: Իրենց հետազոտությունների հիման վրա նրանք կարող են կատարել նախագծային աշխատանքներ, պատրաստել զեկույցներ, սահիկներ, անել վերլուծություններ:

Ենթագլուխ 4՝ Կենսաբանական արտադասարանական աշխատանքների կազմակերպման իմ փորձը

Յուրաքանչյուր ուսուցիչ յուրովի մոտեցում է ցուցաբերում արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործում: Իմ երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում կարողացել եմ սաներիս մեջ դաստիարակել էկոլոգիապես գրագետ մոտեցում ցանկացած բնապահպանական խնդիրների: Դպրոցը, ուր ես աշխատում եմ, գտնվում է Արտավան համայնքում , որն ունի հրաշք բնություն: Կենսաբանական արտադասարանական աշխատանքների կազմակերպման շնորհիվ գյուղի դպրոցականները հաղորդակից են դառնում հարազատ բնաշխարհի գողտրիկ անկյուններին , շրջակա միջավայրի հանդեպ ցուցաբերելով սրտացավ վերաբերմունք:

Արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից նպատակ ունեն դպրոցականների առարկայական գիտելիքների ամրապնդմանը և ճանաչողական հետաքրքրությունների խորացմանը: Աշխատանքները կազմակերպվում են խմբակների, էքսկուրսիաների, արշավների ձևով: Դրանք կազմակերպվում են հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, նախասիրությունները: Դասապրոցեսներում ստացած գիտելիքները խորացնելու նպատակով կազմակերպված արտադասարանական միջոցառումները ցանկալի արդյունք են ապահովում: Արտադասարանական աշխատանքների միջոցով կատարվող ուսումնասիրությունները սերմանում են սեր շրջակա միջավայրի, բնության, բուսական և կենդանական աշխարհների նկատմամբ: Նպաստում են բնության գաղտնիքների բացահայտման , ավելի մոտիկից դրանց ճանաչման գործընթացներին , որն էլ ձևավորում է ուշադրություն, բնության հանդեպ բարեխիղճ ու կարեկից վերաբերմունք:

Էքսկուրսիաների և արշավների կազմակերպման ժամանակ աշակերտները զարգացնում են իրենց ճանաչողական և համագործակցային որակները: Պատանի բնասերները պահպանում են կապը բնության հետ, հաճախ իրականացնում են բնապահպանական խնդիրների բացահայտում և փնտրում են ուղիներ դրանց լուծումներ տալու համար :

Կարևորելով բնական միջավայրի պահպանության խնդիրները, դպրոցականները ակտիվորեն մասնակցում են ձկնագողության , որսագողության և անտառահատումների դեմ: Հանգստյան օրերին նրանք կատարում են սանիտարական մաքրման աշխատանքներ, մաքրելով ինչպես շրջապատը, այնպես էլ գյուղամերձ տարածքները, ուր հանգստանում են շատ զբոսաշրջիկներ(նկար 1):



նկար2

Բնասերների աչքից չեն վրիպում վայրի կենդանիների պահպանության խնդիրները: Նրանք օժանդակ օգնություն են ցուցաբերում բնապահպանական ընկերությունների կողմից կատարվող աշխատանքներին ` ուղեկցելով և անվտանգ ճանապարհներ ցույց տալով, ֆոտոթակարդներ և տեսախցիկներ տեղադրելով (նկար 2), այս կերպ հնարավոր է լինում հայտնաբերել կենդանիներին:

Դպրոցականները ակտիվորեն համագործակցում են << Կենսաբանների հայկական միություն>> հասարակական կազմակերպության հետ: Կազմակերպության կողմից իրականացվում է << Տանձենու վայրի ցեղատեսակների պոպուլյացիաների պահպանումը և կենսունակության ապահովումը Վայոց ձորի մարզում >> ծրագիրը , որի շրջանակներում հիմնված են տնամերձ տնկարաններ: Քաջ գիտակցելով առաջ քաշված բնապահպանական խնդիրը, դպրոցականները ակտիվորեն համագործակցում են տնամերձ հողամասերում տնկարաններ ստեղծելու գործընթացին , իրենց մասնակցությունը բերելով թե' ծլած սերմերի ցանքին, թե' մշակման աշխատանքներին: Նրանք կատարում են ֆենոլոգիական դիտումներ, օգնում են աշխատակիցներին կատարել չափումներ և գրանցել ու համեմատել դրանց արդյունքները(նկար 3, 4):

նկար 3

նկար 4

Հայաստանում հանդիպող վայրի տանձենիները էնդեմիկ տեսակներ են, դրանց մեծ մասը անհետացող են և գրանցված են Կարմիր գրքում, ուստի խրախուսվում է այդ տեսակների պահպանությանն ուղղված յուրաքանչյուր միջոցառում: Ողջունելի է ցանկացած իրադարձություն , որը միտում ունի պահպանել բնությունը: Նշված կազմակերպության ՝ գյուղի տարածքում կատարվող ցանկացած բնապահպանական հետազոտության կենտրոնում մեր դպրոցականներն են իրենց պատրաստակամությամբ ու հետաքրքրասիրությամբ:

Արտավանի անտառը Վայոց ձորի << թոքերից >> մեկն է, ուր արդեն երրորդ տարին է հանդիպում են կովկասյան ընձառյուծի առանձնյակներ: Հենց այս կենդանուն անտառ վերադարձնելու և պահպանելու համար սկսված նախաձեռնությունն էլ հետաքրքրություն առաջացրեց երեխաների մոտ:

2016 թվականին Արտավանն ընտրվել է << Վայոց ձորի լեռնատափաստանային լանդշաֆտների պահպանությունը

էկոտուրիզմի զարգացման միջոցով >> ծրագրի իրականացման վայր : Ծրագրին աջակցում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը(WWF): Ծրագրի շրջանակներում դպրոցականների համար կազմակերպվում են դասախոսություններ, տեսաֆիլմերի դիտումներ և քննարկումներ, զրույցներ, ընթերցումներ և այլ միջոցառումներ (նկար 5 ,6): Երեխաները մեծ նշանակություն տվեցին կովկասյան ընձառյուծի պահպանման խնդրին և առաջարկեցին իրենց օգնությունը խնամակալների կողմից կատարվող աշխատանքներին:

նկար 5

Երեխաների մոտ մեծ իրարանցում առաջացրեց նաև էկոմիջանցքը , որն անցնում է գյուղով , ձգվելով մինչև Մեղրի և Խոսրովի պետական արգելոց: Հաճույքով մասնակցում են նաև տուրիստական արահետների մաքրման և նշագծման աշխատանքներին:

Դպրոցականների ուշադրության կենտրոնում մնում է գյուղի մոտ գտնվող Հայելի լիճը, որն ավելի շատ հայտնի է Արտավանի լիճ

անվամբ: Լիճը համարվում է բնական հուշարձան, քանի որ պատկերում է երկրագունդը: Ցավոք այն գտնվում է ճահճացման վտանգի տակ , ուստի երեխաները ուղիներ են որոնում լճակի կյանքը երկարացնելու նպատակով (նկար 1):

նկար 6

Եզրակացություն

Այսպիսով, դպրոցի ուսումնադաստիարակչական համալիրում իրենց կարևորագույն տեղն են զբաղեցնում նաև արտադասարանական աշխատանքները, որոնք կարգավորում են դասից դուրս երեխաների ազատ ժամանակը: Աշխատանքի այս ձևը ավելի կազմակերպված բնույթ է ստանում, առավել արդյունավետ է դառնում դպրոցում: Դրանք նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը , ուսուցչին լավ հնարավորություն է ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին , նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների ձեւավորելու , հանրակրթական կարողություններով և հմտություններով զինելու համար : Արտադասարանական բազմաբնույթ աշխատանքներում միշտ էլ կարևորվել է աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության հարցերը,որոնք առաջատար խնդիր են համարվում ազգային դպրոցի վերակառուցման, կրթական համակարգի բարեփոխումների շրջանում: Արտադասարանական աշխատանքները կենսաբանությունից մեծ նշանակություն ունեն ինչպես կենսաբանության դպրոցական դասընթացի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման, այնպես էլ հանրակրթության իրականացման համար:

Այն նպաստում է երեխաների էկոլոգիական գիտակցության զարգացման, համագործակցային որակներ ձևավորելու , նորանոր հմտություններ և կարողություններ ձեռք բերելու գործընթացին:

Գրականություն

1. Ա.Դավթյան , Ք. Գրիգորյան , Ա. Արնաուդյան << Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ >>: ԱՅՐԵՔՍ 2002 թ

2.Ա.Զոհրաբյան , Գ. Հովհաննիսյան, Ա. Արնաուդյան << Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն>> ԱՅՐԵՔՍ 2002թ

3.Ա.Ի.Նիկիշով ,Զ.Ա.Մոկեևա, Ե. Վ. Օրլովսկայա << Արտադասարանական աշխատանքներ կենսաբանությունից>>Լույս1984թ

4. Գ. Ի. Շչուկինա<< Մանկավարժություն >> Երևան1969թ

5.Ս.Մ. Մանուկյան << Արտադասարանական դաստիարակչական աշխատանքների առանձնահատկությունները>> Երևան 1980թ